ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՎ ԹԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ԿԵՆՍԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

2024 Թ. ՄԻԱՍՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

ՈՒՂԵՑՈՒՅՑ

(Հանրակրթության նոր չափորոշիչներին և ծրագրերին համապատասխան)

Երևան-2024

Պատասխանատու՝ **Ռուզաննա Գրիգորյան**

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԲԱՆ 3
ԹԵՍՏԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ..... 4
ԹԵՍՏԻ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՏԵՍԱԿՆԵՐԻ ՀԱՄԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆԸ..... 4
ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ ՆՅՈՒԹԸ..... 5

ՆԱԽԱԲԱՆ

Ուղեցույցում ներկայացված են 2024 թ. Տավուշի մարզում ըստ փորձարկվող նոր ծրագրի կազմված ‹‹Կենսաբանություն›› առարկայի միասնական քննության թեստերի առաջադրանքներում ընդգրկվելիք ծրագրային նյութի շրջանակները, կառուցվածքը:

2024 թ. միասնական քննության համար որպես հիմք են ընդունվել ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2023թ մարտի 30-ի N 29-Ն հրամանը, «Հանրակրթական ուսումնական հաստա–տություններում «Կենսաբանություն» առարկայի 7-12-րդ դասարանների առարկայական չափորոշիչը»:

ԹԵՍՏԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Քննական թեստը պարունակում է 70 առաջադրանք: Թեստային առաջադրանքները ներկայացված են հետևյալ 3 կառուցվածքային տեսակներով՝ ընտրովի պատասխա–նով, կարճ պատասխանով և պնդումների փունջ՝ բաղկացած 6 պնդումից: Ընտրովի պատասխանով և կարճ պատասխանով առաջադրանքներից յուրաքանչյուրի ճիշտ պատասխանին տրվում է 1 միավոր, պնդումների փնջին՝ առավելագույնը 6 միավոր:

Թեստի ընդհանուր միավորը 80 է:

Ընտրովի պատասխանով առաջադրանքները 40-ն են՝ (1-40), կարճ պատասխանով առաջադրանքները՝ 28-ը (41-68), իսկ պնդումների փունջը 2-ն են՝ բաղկացած 6-ական պնդումներից՝ (69, 70):

Աղյուսակ 1

ԹԵՍՏԻ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՏԵՍԱԿՆԵՐԻ ՀԱՄԱՄԱՄՆՈՒԹՅՈՒՆԸ

Առաջադրանքների կառուցվածքային տեսակները	Առաջադրանքների քանակը	Առավելագույն միավորը
Ընտրովի պատասխանով	40	40
Կարճ պատասխանով	28	28
Պնդումների փունջ	2	12
Ընդամենը	70	80

Միասնական քննական թեստի առաջադրանքների կատարման համար տրամադրվում է 180 րոպե:

Միասնական քննության միավորը հաշվարկվում է 20 միավորանոց սանդղակով՝ հիմնվելով ամբողջ աշխատանքի կատարման արդյունքում դիմորդի հավաքած միավորների վրա:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ ՆՅՈՒԹԸ

«Կենսաբանություն» առարկայի պետական քննության թեստերում ընդգրկված են առարկայական նոր ծրագրերի ծավալին և բովանդակությանը համապատասխանող առաջադրանքներ, որոնք համապատասխանում են հետևյալ չորս հիմնական գաղափարներին.

1. Բոլոր կենդանի օրգանիզմների կառուցվածքային միավորները բջիջներն են, որոնք կազմված են մոլեկուլներից:
2. Կենդանի օրգանիզմները փոխազդում են միմյանց և իրենց շրջապատող անկենդան աշխարհի հետ:
3. Օրգանիզմներն օժտված են ժառանգականությամբ և փոփոխականությամբ:
4. Կենսաբազմազանությունն առաջացել է էվոլյուցիայի արդյունքում: